

ՀԱՆՏԱՐ՝ ՈՒՐԻ, ՃԱՆԱԿԱՐԳ...

Մ. Ռ. ՇՈՒՆՅԱՆ

Համաձայն աստվածաշնչյան դրախտի պատմության՝ իմացության կամ կե-
նաց ծառի պտուղն ուտելը հանգեցնում է դրախտի կորստյան: Ասել է թե՛ հա-
րուստ կենսափորձը պատճառ է դառնում հոգու՝ դրախտից վտարման, զարթնու-
մի, արթնության, սթափ մտածողության: Սակայն մարդու բնույթն այնպիսին է, որ
նա ի զորու չէ սանձելու սեփական մտքի վերսլացումը, և, թերևս, մարդու կյանքի
իմաստը հենց իմացության աստիճաններով վեր էլնելն է, ամբողջ անսահմանի
կառուցում իր տեղի ու դերի իմաստը հասկանալը:

«Հանճար» բառը նախնական իմաստով նշանակել է ճանապարհ, կերպ, ե-
ղանակ՝: Նույն «հանճար» բառը պարսկերենում նշանակում է նաև կարգ, կանոն,
միտք, խոսք, բանականություն, մարդու ներքինը: Այն կապվում է նաև սանկրիտ
սամսար *samśāra*¹ պտույտ, ճանապարհ բառի հետ՝: Համադրենք վերոհիշյալ
փաստերը:

Հանճարն այն անձնավորությունն է, որն իր բացառիկ մտքով, իմաստնու-
թյամբ հասու է կյանքի հավերժական պտույտին, տիեզերական կարգ ու կանոնին
և գիտե ճանապարհը, ուղին, որով պետք է առաջնորդվի մարդկությունը: Նշա-
նակում է՝ հանճարն այն բացառիկ անհատն է (նախնական իմաստով), որին վե-
րուստ տրված է իշխանություն և մարդկությանը առաջնորդելու «մուրճի» փիլիսո-
փայություն՝: Իսկ ինչպե՞ս է հանճարը՝ բացառիկ անհատը, հասնում հանճարե-
ղության այն մակարդակին, որտեղից նա տեսնում է սամսարը, դառն կամ գոյու-
թյան հավերժական պտույտը և մարդկության ընթանալիք ուղին: Փորձենք մեկ-
նաբանել աստվածաշնչյան մի շարք սիմվոլներ, այնուհետև համադրել:

Ո՞վ է Ս. կույս Մարիամը:

Մարիամ բառի ստուգաբանությունը նշանակում է՝

1. տառապյալ, դառնացյալ, մոայլված՝, 2. լուսավորյալ՝:

Տառապյալն այն անձն է, որի ներսում պատերազմ է, փոթորիկ, խավար (ի
դեպ, Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մասին խոսելիս ևս
նշվում է, թե մարդը պատերազմի դաշտ է)՝: Սակայն նման ինքնամաքառումից,
ներքին պատերազմից բացառիկ հոգեկան կերտվածքով անձինք «ծնում» են լույս,
խաղաղություն և հանդարտություն: Ներքին պատերազմն ավարտվում է հոգու
խաղաղությամբ: Այս հոգեկան կերտվածքով անձանց Ֆ. Նիցշեն անվանում էր
«պատերազմի իմ եղբայրներ»: Նման հոգեկան կառուցվածք ուներ, օրինակ,
Բուդդան (Սիդհարթհա Գաուտաման, որը, հանգելով հոգու խաղաղության կամ
Նիրվանայի, դարձավ Բուդդա՝ Լուսավորյալ):

¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. 3, Եր., 1977, էջ 41:

² Տե՛ս նույն տեղը:

³ Այս ձևակերպման մասին տե՛ս Ֆ. Նիցշե, Զատվածների մթնշաղ, Եր., 1992:

⁴ Տե՛ս «Мифы народов мира», энциклопедия, т. 2, М., 1992, էջ 112:

⁵ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն անձնանունների բառարան, Բ. 9, Եր., 1946, էջ 249:

⁶ Տե՛ս Լ. Սարգսյան, Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ը որպես Ս. Գրքի մեկնաբա-
նության աղբյուր («Վասն արդարութեան», 2003 թ., ապրիլ, էջ 26):

Դիցարանական Վահագնի կերպարը, որը խորհրդանշում է և՛ պատերազմ, և՛ արև, ոչ այլ ինչ է, եթե ոչ նման հոգեկան կերտվածքի սիմվոլացում, այսինքն՝ ներքին ռազմից անցում դեպի հոգու պայծառացում, իմաստնացում կամ արևի ծագում: Նույն երևույթը պարսկական դիցարանում սիմվոլացված է Միհրի պատկերով՝ ռազմի և արևի աստծո⁷: Հետևաբար՝ «տառապյալ» և «լուսավորյալ» հակադրամիասնությունն է, որ կոչվում է Վահագն, Միհր, Դիոնիսիոս⁸, Բուդդա, Մարիամ... Հայտնի է նաև, որ վերոհիշյալ հոգեկան կերտվածքը՝ կամքի և բանականության նման հասունությունն ու հոգևոր ահռելի անը, սիմվոլացվում է լեռան պատկերով⁹: Օրինակ՝ Գիլգամեշի այցը Մաշուի կատար, ուր Ռտնապիշտին էր, Քրիստոսի քարոզները լեռան կատարից... Բլուրը, լեռը, բարձունքը (օտար բառով՝ Գողգոթան) սիմվոլներ են, որ խորհրդանշում են հոգևոր աճ և հասունություն, արթնություն: Սակայն հոգեկան ի՞նչ բացառիկ կերտվածքի մասին է խոսքը, որը տվյալ ընտրյալներին բերում է լեռան բարձունք, գողգոթա, այնտեղից էլ՝ հարության, ներքին արևի, հոգու լուսավորման, պայծառացման, որն էլ նրանց հնարավորություն է տալիս նախանշելու մարդկության անցնելիք ուղին, քանզի այդ հանճարներն իմանում են «ուղին», «դառն» (դառնականության հիմնական հասկացություններից մեկը, որ բառացի նշանակում է ճանապարհ), «սամսարը», ճամփան:

Պարզեցինք «Մարիամ» սիմվոլը: Այժմ պարզենք, թե ինչու է «կույս» մակդիրը միշտ դրվում Մարիամ բառի վրա:

Կրոնական գրեթե բոլոր համակարգերը որպես կանոն բարձրաստիճան հոգևորականից պահանջել և պահանջում են կուսակրոնություն: Այսօր ինքերցիայով երևույթը շարունակվում է, բայց բուն պատճառը դարերի ընթացքում մթազնել, մոռացվել, աղավաղվել, անհետացել է մարդկության հիշողությունից: Վերականգնենք այն:

Արդի հոգեբանությունը՝ որպես գիտություն, հասել է մի մակարդակի, ուր մարդու հոգեկանին առնչվող բազմաթիվ հարցերի պատասխաններն են տրվում: Դրանցից մեկը սուբլիմացիա երևույթն է: Այսպես է անվանվում մարդու սեռական էներգիայի վերածունը մտավոր և հոգևոր բարձր կարողությունների¹⁰: Այս երևույթը մարդկության գիտակցությանը հասու է եղել ամենավաղնջական դարաշրջաններից: Հոգևոր ծառայության կոչված անձը պարտավորվել է սուբլիմացիայով բարձրանալու վեհացված, ահռելի հզոր ու բարձր մի ներքին (ի դեպ՝ «ներքին») բառը ևս հուշում է սուբլիմացիայի մասին) որակի, որը սիմվոլիկ կերպով կարելի է բնորոշել «լեռ»: Հետևաբար՝ սուբլիմացիան, որպես կուսության հետևանք, բացառիկ անհատներին բարձրացնում է հոգևոր լեռը՝ մտավոր, կամային, հոգևոր բացառիկ որակների միագումար, մի բարձունք, որտեղից տվյալ բացառիկ անձը կամ հանճարը («հանճարը» այսօրվա իմաստով) տեսնում է մարդկության ուղին, դառն, սամսարը, ճանապարհը: Սովորական մարդու համեմատ, որի գոյությունը պատճառաբանված է միայն մի՝ անհրաժեշտությամբ՝ իր տեսակի վերարտադրություն, բնականաբար սեռական ժուժկալությունը, ճգնակեցությունը աստվածային, բացառիկ, սուրբ երևույթ է: Հետևաբար՝ «կույս Մարիամ» սիմվոլը ստանում է նաև «սուրբ» մակդիրը: Ծղրակացություն՝ Ս. կույս Մարիամը բացառիկ այն ընտրյալն է, որը սուբլիմացիայով (վեհացում) բարձրացել, հասել է սովորական մարդուց անչափելի բարձր մի որակի՝ ներքին սիմվոլիկ լեռը, բլուրը կամ տառապանքի գողգոթան: Ս. կույս Մարիամը կարող է լինել և՛ կին, և՛

⁷ Այս մասին ավելի հանգամանալից տե՛ս Մ. Շուլցիյան, Լ. Օանթի «Հին աստվածներ» դրաման, Վանաձոր, 2002, էջ 140-143:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 120-125:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 13-15:

¹⁰ Տե՛ս Ա. Նալչաշյան, Հոգեբանական բառարան, Եր., 1984, էջ 191-192:

տղամարդ, քանզի այն սիմվոլ է, որն իր տակ թաքցնում է սեռական, կենդանական մղումները խեղդած, զսպած սրբի՝ պատերազմագարթնածի¹¹: Նրա առաքելությունը ուղի, ճանապարհ, դատ, սամար, դուռ տալն է մարդկությանը, ճանապարհ, որով պետք է ընթանա հասարակ, մահկանացու մարդը: Մի՞թե այդ ճանապարհը, ճիշտ ուղին, որ բխում է Աստծուց, փրկիչ չէ մարդկության համար: Իհարկե, այն փրկիչ ուղի է: Հետևաբար՝ Ս. կույս Մարիամի գերեզոք բանականությունը, միտքը ծնում է, ծնունդ է տալիս Հիսուսին (թարգմանաբար՝ փրկչին): Իսկ Ավետարանում Քրիստոսն ինքն է ասում. « Ես եմ դուռը... » (Հովհ., Ժ, 9): Հիսուսը դուռ է, ուղի, ճանապարհ, նրանով է փրկության ճանապարհը, նա է միակ ճշմարիտ աստվածային ուղին, մարդու կյանքի ուղին՝ աստվածային լույսը: Դեռևս Նիկիայի տիեզերածողովում (325 թ.) ընդունված Հավատո հանգանակում ասված է, որ Հիսուսը ծնունդ է և ո՛չ արարած: Եվ այսպես. Ս. կույս Մարիամը Հայր Աստծուց, որը տիեզերքի արարիչն է («Հավատամք ի մի Աստուած՝ ի Հայրն Ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երեկելեաց և աներևութից», - կարդում ենք Նիկիո Հանգանակում), նրանից բխող լույսից, աստվածային բարությունից, էությունից «հղանում» և «ծնում» է, ասել է թե՛ Սուրբ Հոգուց ներշնչված, աստվածային ներշնչանքով լեցուն, Սուրբ Հոգով լեցուն, իր ներքին տառապանքով (հոգևոր տառապանքի լեռան կատարից) «գտնում է» ուղին. մարդկության համար, նրա փրկության համար ծնում է, ծնունդ է տալիս «Աստծո որդուն»՝ փրկչին, այսինքն՝ տալիս է փրկիչ ուղի, դուռ, ճանապարհ, կարգ, բանականություն, ապրելու եղանակ, խոսք կամ լոգոս Աստծո լույսի ճամփով քայլելու մասին. «Ես եմ դուռը...» ճանապարհը, ուղին: Սակայն, բնական է, որ այս սիմվոլներից «լեռան» ստորոտում հավաքված մարդկությունը զլուխ չէր հանելու (Հ. Թումանյանի խոսքերով՝ վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին...): Հիսուսը, որ Փրկիչ է և Կենաց հաց՝ ապրեցնող, հոգին լույսով լցնող, դառնալու էր նաև Քրիստոս՝ խաչյալ (Քրիստոս բառի արմատը ռուսերենում հստակ պահպանված է առ այսօր՝ kereszt - խաչ), այսինքն՝ այդ գաղափարը «ծաղրվելու» էր, «չարչրկվելու» էր, «ուրացվելու» էր, մի խոսքով՝ խաչվելու էր, նույնիսկ փորձելու էին թաղել, սակայն այն երբեք չի մեռնում, հարություն է առնում, գալու է հավիտյան, և նրա թագավորությունը հավիտյանս հավիտենից է (գրեթե ութսուն տարի մեզանում մոլի աթեիզմն էր իշխում, իսկ այսօր հավատքը նորից է վերագարթնել, եկել է Աստված), քանի որ մարդը հավերժ ունի Աստծո մասին խոսքի կարիք, ուղու կարիք, որը տանում է դեպի Աստված: Հետևաբար՝ «որոշ Թագավորութեանն ոչ գոյ վախճան», - կարդում ենք Հանգանակում: †, ✚, ☉ նշանները խորհրդանշում են հավերժություն, իսկ քրիստոնեական խաչը սիմվոլ է, որը խորհրդանշում է Աստծո և դեպի Աստված տանող ուղու հավիտենականությունը: Բուդդայականությունն էլ, որպես հավերժության խորհուրդ, օգտագործում է սվաստիկան ✚: Հիսուսի տառապանքը Գողգոթայի վրա պետք է ընկալել որպես հոգևոր հասունության գողգոթա՝ բացառիկ հանճարի տառապանքը հոգու լեռան բարձունքին (սա նույն միջշեյան «բարձր լեռներից» հոգեբանությունն է), որը համազոր է խաչման, իսկ այստեղից էլ բխում է լույսը մարդկության համար, փրկությունը՝ Աստծո լոգոսը, Հիսուսը: Հետևաբար՝ Հիսուսը հոգևոր տառապանքից մարդու փրկության ուղին, ճանապարհը, լոգոսը, խոսքը, գաղափարն է, որը բխել է Հայր Աստծո լույսից՝ Ս. կույս Մարիամի՝ տառապալ լուսավորչայի աստվածային հանճարի միջոցով:

Այստեղից էլ «հանճար» բառի նախնական իմաստի ստուգաբանությունը. անձ, որը տալիս է ուղի, ճանապարհ¹², դուռ: Հոգևոր, կամքի և բանականության

¹¹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 314:

¹² Լ. Օսանթի «Հին աստվածներում» վանահայրը այն հանճարն է, որը բերում է նոր ուղի, ճանապարհ՝ դեպի միջշեյան գերմարդ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ֆ. Նիցշեի ուսմունքը ռուսի «պայթուցիկությանը» տարածված էր ողջ Եվրոպայում, որն իր ազդեցու-

ներքին այս «լեռան» կատարին հասածը, պարզ է, որ «Աստվածաշնչում» պիտի զգուշացնի կենաց պտուղը չուտելու մասին, որպեսզի մարդը մնա հոգու դրախտում:

Դարերի ընթացքում շատ բան է աղավաղվել, և որոշ երևույթներ այսօր մեզ են հասել նախնական կերպարանքից այնքան զրկված, որ շատ դժվար է կոահել դրանց իրական, նախնական տեսքը: Օրինակ՝ ի՞նչ է ճգնակեցությունը: Բոլոր կրոններում ընդունված այս երևույթը մի նպատակ է հետապնդել՝ հոգեկան ինքնամաքում: Սա Ս. կույս Մարիամ լինելու աղավաղված արտացոլքն է, քանի որ վահագն, Միհր, Մարիամ... դառնում են ինքնապատերազմով, սուբլիմացիայով՝ ձեռք բերելով կամքի, բանականության, մտքի ահռելի աճ, որն էլ տանում է դեպի հոգու Նիրվանա և հանճարեղ մտքի, ուղու, ճանապարհի ծննդի: Սակայն հոգեվորը հասկանալով աղավաղված, այսինքն՝ հոգեկան տանջանքի փոխարեն, որն

թյունն ունեցավ նաև հայ գրականության վրա: Բացառիկ հանճարի առաքելությունը ճանապարհ, ուղի տալն է մարդկությանը, ըստ Նիցշե հանճարի՝ այդ ուղին գերմարդու կայացումն է. մարդը պետք է գնա դեպի գերմարդ: Հենց այս հոգեբանությամբ և աշխարհայացքով պետք է մոտենալ Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» շարքին, ուր Չարենց հանճարի կողմից ուղի է տրվում՝ «Գիրք ճանապարհի»: Իրավացիորեն Ս. Աղաբաբյանը նշել է, որ այն պետք է դիտել դառսիզմի ազդեցություն (Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986, էջ 312), ավելացնենք միայն, որ և՛ դառսիզմը, և՛ քրիստոնեությունը, և՛ բոլոր կրոնական համակարգերը, և՛ Նիցշեի ուսմունքը (իր գերմարդով) նույն բանն են ասում՝ ուղի, ճանապարհ: Հետևաբար՝ դեպի ռուսական կողմնորոշում («Դեպի լյառը Մասիս»), դեպի սոցիալիստական հեղափոխություն («Մահվան տեսիլք»՝ Լենինի պատկերով), ո՞րն է ուղին «այս խորշակյալ անդուտ Արարատյան դաշտից» («Պատմության քառուղիներով») փնտրտուքից Չարենցը հանգում է «Պատգամ» ակրոստիքոսին, որը նորօրյա հերմետիկ գրություն է՝ ասելիքը փակված ուղղահայաց երկրորդ տողում. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Մի մեկնաբանություն ևս՝ կապված Չարենցի հետ: «Homo Sapiens»-ում (գրված 1928-1929 թթ.) անդրադառնալով իր պատանության օրերին՝ Ե. Չարենցը գրում է.

... որ ինքը դառնալու է կյանքում...

Մի հանճարեղ պոեմ:

.....

Այդ պատանին հետո դարձավ պոետ

Եվ գրեց այս նովելը, որ դուք կարդաք...

Հայտնի է, որ Չարենցի «Homo Sapiens»-ը գրվել է լեճ գրող Ս. Պշիբիշևսկու համանուն գործի ազդեցությամբ, այնինչ Պշիբիշևսկու վեպն ամբողջությամբ թաթախված է միջնադարյանությամբ: Հայ ընթերցողը Նիցշեին «ճանաչել է» միջնորդավորված՝ Պշիբիշևսկու գրքով: Չարենցի գրական ծածկանվան արմատներն այստեղից են գալիս, այսինքն՝ ծանոթ լինելով միջնադարյանությանը՝ նա վճռում է լինել (դեռ պատանության օրերին) այն «չարը», այն ներքին պատերազմն ու խավարը, որից այլոց համար բխում է լույս, բարի, երջանկություն, հոգու խաղաղություն: Այսինքն՝ «Չարենց» ծածկանունը հուշում է, որ Ե. Սողոմոնյանն զգում էր իր հոգևոր կապը, հոգեզավակությունը նախորդ, ներկա և ապագա բոլոր դարաշրջանների հյուսիս մեծագույն մտածողների հետ, որոնք առաջ են մղում մարդկությանը՝ ներքին պատերազմով ճառագելով լույս (տե՛ս Մ. Շոլիմյան, Լ. Ծանոթ «Հին աստվածներ» դրաման, էջ 122-123, 136): Հետևաբար՝ «Չարենց» նշանակում է այն «չարերից», որոնց խաչում են միջնադարյան մորմերը՝ նրանցից բխող լույսի համար (ինչպես Քրիստոսին՝ «լեռան» ստորոտում հավաքվածները):

Նիցշեի պարադոքսալ ձևակերպմամբ «Չարենց» ծածկանունը կնշանակի «Ահավասիկ, ես գլխի եմ ընկնում. դուք իմ գերմարդուն աստանա՝ էիք անվանելու» («Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, մ. II, «Նորք», № 6, 1990, էջ 117), կամ «Գիշեր է. հիմա ավելի բարձր են խոսում բխող աղբյուրները բոլոր: Եվ նաև իմ հոգին է բխող աղբյուր» («Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, Եր., 2002, էջ 130), ասել է թե՛ հոգու՝ գիշերվա թանձրացյալ խավարից՝ «չարից» է բխում լույսը: Այս նույն տեսանկյունից պիտի մոտենալ նաև Պ. Սևակի «Եղիցի լույս» շարքին. թանձրացյալ խավարից պետք է լույս բխի:

ազնվացնում է հոգին, մարմնական տանջանքներով իրենց տանջելով՝ ճգնա-
կյանքները փորձել են սրբանալ, դառնալ պատերազմագարթնած՝ Ս. կույս Մա-
րիամ: Մարդու երկրային կյանքի իմաստը դեպի Աստծո լույսը տանող ուղին
բռնելն է, աստվածային ճշմարտության ճամփով քայլելը, ինքնապատերազմով
զարթնելը և մահվան գոյության ցավից աթափվելով՝ մարդու կյանքի իմաստը այս
երկրային ուղիներում¹² ըմբռնելը, այն է՝ հոգևոր ինքնակատարելագործում,
հոգևոր մաքրում («սուրբ» բառի նախնական իմաստով՝ սրբված, մաքրված), հոգու
վերսլացում առ հավիտենական լույս՝ Հայր Աստված:

Մ. Ր. ՇՈԼԻՆՅԱՆ - *Гений: дорога, путь...* - Первоначально слово «гений»
в армянском языке означало: путь, дорога, способ. В персидском оно означает
порядок, правило, мысль, слово, разум. На санскрите *satcāga* тоже означает
дорога, оборот. Главное понятие даоизма (дао): дорога, путь. Символические
образы язычества (Мигр, Ваагн), а также христианства (Мариам) этимологически
связываются с понятиями света, мира, дороги, логоса. Отсюда: Мигр, Ваагн, Ма-
риам - гении, которые указывают человечеству путь к спасению, открывают пе-
ред ним двери, дарят ему мысль, разум.

Наука психология объясняет это как следствие девственности: у исключи-
тельных личностей она приводит к сублимации, к преобразению сексуальной
энергии человека в высшие формы умственной, духовной, творческой энергии. В
силу сублимации дева Мариам становится тем гением, который может открыть
человечеству спасительный путь, дорогу, дверь, родив спасителя - Иисуса Христа.

¹² Մարդու հոգևոր ինքնակատարելագործման հավերժական թեման, որպես «հա-
վերժական վերադարձ», այնպե՛ս շքեղորեն դրսևորվեց նաև XX դարի II կեսի և դարա-
վերջի հայ գրականության մեջ: Սրա լավագույն դրսևորումներից են Պ. Սևակի «Մարդը ա-
փի մեջ» ժողովածուն, «Առաջադրանք համայն աշխարհի...» բանաստեղծությունը, Հ. Ծի-
րազի «Բիրլիական»-ները, Վ. Դավթյանի «Լույս առավոտի» շարքը, «Տեճո» պոեմը և այլն,
և այլն: Այս երկերը ևս պետք է ընկալել որպես թանձրացյալ խավարից, ցավից, տառա-
պանքից լույսի, կատարելության, մաքրագործման ձգտում՝ մարդու ինքնակատարելա-
գործման երազանք: Սակայն չի կարելի չխոսել մի էական առանձնահատկության մասին:
Խորհրդային տարիների աթեիզմը, անշուշտ, կա այս գործերում, այդ պատճառով էլ կա-
րելի է ասել՝ տրված է մարդու ուղին մարդուց ոչ թե դեպի Աստված, այլ մարդուց դեպի
Մարդ, մեծատառ Մարդ, որն ինքը միջշելյան Գերմարդն է: Սակայն դեպի Աստված, թե
դեպի Գերմարդ, կարևորը մարդու ներքին միտումն է ահագնորեն բարձր և անհասանելի
մի բանի՝ հավատով, հույսով, որը դառնում է մարդու կյանքի իմաստ: